# ՑՈՒՑԱԿ ԵՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

### ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ

(1512 — 1800)

12

ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ (ԳԱԼԱՆՈՍ). ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ: Հռոմ, տպ. Հաւատոյ Տարածման (Propaganda Fide), 1645. 30 չ. + 55 թերթ (110 էջ) + 40 էջ + 106 թերթ (212 էջ) + 27 թերթ (էջ 54) = 446 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՔԵՐԱԿԱՆ, ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԱՌ ՅԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ՃԱՇԵԼՈՅ: GRAMMATICAE, ET LOGICAE INSTITUTIONES Linguae Literalis Armenicae Ad. Clemente Galano Clerico Regulari Sacrae Theologiae Professore, Et Sanctae Sedid Apostolicae ad Armenos Missionario. Addito Vocabulario Armeno-Latino omnium scholasticarum Dictionum.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ Ա

Ընկալ ով գերապատիւ սուրբ իշխանց եկեղեցւոյ տէր Պարբերեայ Անտոն, արփիափայլ գագաթդ սրբազան համգիտի մեծին Հռոմայ՝ զգիրքս այս Քերականութեան, և Լոճիկային, ի մեր լեզու արտադրեալ ի խնդրոյ քոյ ի կարգէ Թէատինեանց պատուական պտղոյ Կղէմէս աստուածաբան վարդապետէ: զի զգործառնութիւնս ես յիսուսի քրիստոսի նուաստ ծառայ Յոհաննէս վարդապետ հայոց եղեալի, և Արքեպիսկոպոս Միջագետաց՝ Ջերմեռանդ սրտիւ մատուցանեմ վեհագոյն Բարձրութեանդ քում. որպէսզի ընդ արքայաշուք հովանեաւ վեհանձնութեանդ ընկալեալ՝ համարեսցի այլք արժանի արդարութեան. և պատահար եղիցի խնդամտութեան ազգիս մերոյ. ի փառս քրիստոսի: ողջ լեր ի տէր:

Գրեցաւ ի քաղաքս կոստանդնուպոլսի: ի թվին փրկչին ռխբ. և հայոց. ռղա. յուլիս. ԻԹ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ Բ

Ես Խաչատուր վարդապետս գաղատայի Պատրիարքս հայոց յարքայանիստ Քաղաքիս Կոստանդնուպոլսի. վկայեմ, զի այս Քերականութիւնս, և Լոճիկայս՝ շարադրեալ ի հայ լեզու ի կարգէ Դէատինեանց Կղէմէս աստուածաբան վարդապետէ, ի խնդրոյ Յոհաննէսի աստուածաբան վարդապետի Եղեսացւոյ, և Արքեպիսկոպոսի միջագետաց աշխարհի. է գործ ամենեւին անարատ. որ փայլեցուցանէ և ճշմարտագէտ ուսուցանէ զմեր լեզուս, և զայլ բանս: Մինչ զի և ես խոկ ոչ սակաւս ուսայ սորայ ընթերցմամբ: Նա եւս յուսամ Հայք Կիրակոս վարդապետն որ նախ քան զիս էր Պատրիարք հայոց կոստանդնուպոլսի՝ խիստ հաւանեալ էր գործոյս այսմիկ: Արդ՝ ես ի վկայութիւն այս ճշմարտութեանս գրեալ եմ զայս. զի յորդորեսցին ի մեծն Հռոմ տպագրել զոյգակից գործս սա ի յօգտութիւն ընթերցողացն մերայնոց:

Ես Խաչատուր վարդապետ և Պատրիարք հայոց կոստանդնուպոլսի իմով ձեռամբս գրեցի, և կնքեցի ի սոյն քաղաքս կոստանդնուպոլիս: ի թվին փրկչին. ռխբ. և հայոց. ռղա յուլիս իգ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ Գ

Ես Պօղոս վարդապետս ստամպոլցի, և շնորհօքն աստուծոյ եպիսկոպոս հայոց քաղաքին տիվրիկոյ. ընթերցայ մանրութեամբ՝ զգիրքս քերականութեան, և լոճիկային,

digitised by A.R.A.R.@

արտադրեալ ի մեր լեզուս՝ գեղեցկայարմար շարիւ ի կարգէ Դէատինոսաց՝ պատուական պատրի, Կղէմէս Գաղանոս վարդապետէ, ի խնդրոյ Յոհաննէս աստուածաբան վարդապետի Եդեսացւոյ, և արքեպիսկոպոսի միջագետաց։ Եւ բառ կարի խնամով, մերահաստ եղէ, որ յոյժ հրմտարար, և ստուգիւ սահմանեալ եղեւ մեր լեզուն։ Եւս առաւել՝ զի բացեալ լինի ամփոփումն իմաստութեան ազգիս մերոյ։ Որոյ աղագաւ աղերսեմք ի յաղթարգն մերոց ի բրբտաս, որք ի մէնն հռոմ, արժանի արասցեն զգիրքս՝ զապաւորութենէ, առ ի յազատկարութիւն կարգացողաց։

Ես Գաղանոս վարդապետ, և եպիսկոպոս հայոց՝ ձեռամբ իմով գրեցի և կնքեցի, ի կոստանդնուպօլիս, ի թվին փրկչին ռոխբ։ և հայոց, ռղա։ յուլիս. իզ։

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

ԾԱՆՕԹ.

1. Տրուած են նաեւ վերոյիշեալ երեք վկայութիւններուն լատիներէն թարգմանութիւնները։
2. Իւրաքանչիւր վկայութեան կ՚ընկերանայ վկայողին կնիքը։
3. Լատիներէնով կայ նաեւ Նիկոլ Թորոսովիչի վկայութիւնը, իր կնիքով, գրուած Հռոմի մէջ Հայոց 1092 թուականին։ Կնիքին վրայ կը կարդացուի. Nicola. Turosowic. D. G. Aepus Leopol. Walahi Nati. Armen։

Կիւլպէնկեան Մատենադարան

463-5 Կզ.

## 13

ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ (ԳԱՂԱՆՈՍ). ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ... ։ Հռոմ, տպ. Հաւատոյ Տարածման (Propaganda Fide), 1650. 60 չհ. + 531 + 1 չհ. = 592 էջ։

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ԸՆԴ ՄԵԾԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀՌՈՎՄԱՅ։ Ծարտադրեալ ի յերկուս հատորս. ի պատմական և ի վիճաբանական ի կարգէ Թէատինոսաց Կղմէս վարդապետէ։ CONCILIATIONIS ECCLESIAE ARMENAE CUM ROMANA. Ex ipsis Armenorum patrum. In duas partes, Historialem & Controuersialem diuisae. Pars prima. Avtore Clemente Galano Surrentino clerico regulari theologo et S. Sedis Apostolicae ad Armenos Missionario. Առաջին հատոր (Հայ. և Լատին, Պատմագրական)։

### ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Հրամանաւ սրբոյ ժողովոյն. որ վասն հաստատութեան հաւատոյ. Ես Տէր Գրիգոր Մարծարեցի. Ազգաւ հայ ի կարգէն քարոզողաց. տեսի զպատմագիր մասն Միաբանութեան Եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմայ. Արտադրեալ ի Պատուական Տէր Կղեմէս Աստուածաբան Վարդապետէ։ Յորում զոր գրեցեալն Հայոցն պատճենի գեղեցկայարմն քաղուածս շարադրեալ է հանդիսադէս ասպաւն լաթինացւոցն բարբառ։ Նաեւ ոչ գոյ ի սմայ իմն ինչ. որ ընդդիմացի Կաթուղիկէ հաւատոյն. կամ կենցաղեցս բարուց։ Իմա զարծ օգտակարագոյն համարեմ. և Հայոց ազգին պիտանացու։ որով յաջողեսցէ հաւատս ուխորհմացեալք լինելոյն։ քանզի երեւի ի սմա վերադիտող գործոյս արտասանեալն Կղեմէս Վարդապետ, ի Հայոց գրոց և պատմագրաց, մանաւանդ ժողովոց որք ի մէջ նոցին կատարեցան, զհաւատոյ ճշմարտութիւն պայծառապէս արտայայտէ, և յայտ նոցին խոկապէս բացատրէ։ Որոյ յաղագս արժանաւորագոյն համարիմ զգիրքս. զի բստ հրամանի սուրբ ժողովոյն ի լոյս գայցէ։ Առ ի հաւատարմութեան բանիս զներկայ ստորագրեցի ձեռօք Հայոց բարբառաւ և Լաթինացւոց ծրեցի. եւս եւ եղ ենթադրեցի։ Թվին տեառն. Մայիսի ժէ. ի Հռոմ ի Վանս սրբոյն Կղէմէնտի։

Տէր Գրիգոր Մարծարեցի ի կարգէն
Քարոզողաց Հայկազան Սեէ։

digitised by A.R.A.R.@

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

ԾԱՆՕԹ. Չեն առնուած լատիներէնով գրուած եւ լատին կղերականներու ստորագրութիւնները կրող վկայութիւնները։

Կիւլպէնկեան Մատենադարան

230-2

1650

## 14

ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ (ԳԱԼԱՆՈՍ). ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ...։ Հռոմ, տպ. Հաւատոյ Տարածման (Propaganda Fide), 1658. 46 չհ. + 487 = 533 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ԸՆԴ ՄԵԾԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀՌՈՎՄԱՅ։ Շարադրեալ ի յերկուս հատորս. ի պատմական եւ ի վիճաբանական ի կարգէ Թէատինոսաց Կղեմէս վարդապետէ։ CONCILIATIONIS ECCLESIAE ARMENAE CUM ROMANA. Ex ipsis Armenorum patrum, In duas partes, Historialem & Controuersialem diuisae. Pars altera. Avtore Clemente Galano Surrentino clerico regulari theologo et S. Sedis Apostolicae ad Armenos Missionario. Tomus primus Երկրորդ հատոր, Մասն առաջին, Վիճաբանական։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Չունի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

Կիւլպէնկեան Մատենադարան

230-2

1650

## 15

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ։ Վենետիկ, տպ. ձեռամբ Պաղտասար Պօլիա, 1660. ՇԻԶ (526) էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

Չունի։ Կը սկսի «ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ, Հօր միածին...»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ծանուցում պայման ընթերցողաց։

Փառք համանման էութեան եւ միակաց բնութեան անհասանելի զօրութեան եւ անբաւ բարերարութեան երրեակ եւ մի աստուածութեան եւ անբաժանելի սուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն Որ եւ կարողութիւն նուաստ եւ տառապեալ անձին իմոյ ձեռամբ պաղտասար որ մականուամբ ասի Պօլիա որ եմ ազգաւ յազգեացն ի գեղեցկաշէն մայրաքաղաքէն վենետիկոյ Զոր բազում ջա–

digitised by A.R.A.R.@

նուէր եւ աշխատանօք հազիւ կարացի ի յանկ հանել տպագրութեան արուեստս Եւ ոչ ըստ ամէք եղեւ ինձ օգնութիւն այսմ տպագրութեան արուեստիս այսորիկ. Այսուհետեւ ի յայս ամենեցուն քրիստոս եւ ի շնորհաբաշխ հոգին սուրբ աստուած բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին. եւ աղօթիւք սրբոյն գրիգորի լուսաւորչին. եւ բարեխօսութեամբ ընդհանուր անօթոցն և առաքելոցն պետրոսի և պօղոսի եղի ի մէջ տպագրութեան արհեստ աս ի պայծառութիւն ազգին հայոց. Այլ եւ պատճառ աշխատանաց մերոց այս էր. որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր եւ բաղձանութիւն հետ ազգին հայոց. եւ յորժամ ցանկայի անառնել բաշխելաշուք ի խնդրն հայոց խօսից աշխարհն.

Զոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ. զոր փափաք է ու աստուած. եւ շնորհաւ որդին իւր զխօսնս փաղանն սէր աստուած ընդ երկայն աւուրս արարցէ. Զոր եւ պարգեւատուն ամենեցուն քրիստոս պարգեւեաց ի ձեռն իմոյ զայս շահն աս ի պայծառութիւն ազգն հայոց Այլ եւ խնդրեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան բանից ամենեցուն. ոչ գիտէի լեզու հայոց եւ կամ գիր. եւ ոչ տեսեալ ի փորձեալ զայս տպագրութեան արհեստ բաց պարգեւելոյն սմայ ի հոգոյն սրբոյ. այլ զայն յայս անեալ երեւեցուցի զաւան օգտութեան ազգին հայոց. զոր եւ հասի յատուր բաց ձեռամ ազօթիւք. Եւ Եթէ նուազութիւն գտանէք խմամ պակասութեանս զի կար մեր այս էր. Արդ եղեւ կատարումն եւ աւարտումն երգոյս Տեառն Ներսէսի հայոց կաթուղիկոսի զոր անուանեալ կոչի Յիսուս որդի ի յար եւ յրնաւիր յոբելինի բազում քնութեամբ եւ բառագրաճեալ. ի Թվականութեանս հայոց. ռճ և Թ. ի յամսեանն մայիսի... Ի հայրապետութեան հայոց համուրց սեար Տեառն յակոբայ երկցս երանելայ երջանիկ հայրապետի Ի վայելուչ եւ գեղեցիկ կղզիփանոաբկայ Եւ յիշխանութեան նորին քաղաքի. Տեղենիկս Գոնդարինի Դուաի եւ մետամնեդ հրամանաւ եւ բրիփիլէճով Դարձեալ աղաչեմ զձեզ որք հանդիպիք սմայ կարդալով եւ կամ աւանդելով յիշեցէք ի քրիստոս եւ մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ ծառան պագիազայ պաշխախ եւ ծնողացն իմոց. եւ զեղբարցս զուակացն իմոց եւ այլ ամենայն մերձաւորացն իմոց. եւ զուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ աստուծոյ մերոյ ամէն. Դարձեալ յիշեցէք ի քրիստոս Յովհաննէս տէր բանեփանոսի որդի եղբայր ազան որ նա եւս աշխատեցաւ ի սրբագրելն սորա. Դարձեալ յիշեցէք ի քրիստոս զնորահաս մանուկն բանեփանոս որ է ազգաւ հայ որ շատ աշխատեցաւ. եւ օգնութիւն արար այս արհեստիս ի սրբագրելն եւ ի շարելն եւ այլ ամենայն արդիւնութեան սորայ մինչ սէր աստուած զինքն անփորձ պահեսցէ ամենայն չարէ ամէն.

Կատարեցաւ գիրքս ը. նախ յիսուս որդի եւ սպաս սաղմոս,
ի ամստերդամն քաղաքն.

Կիւլպէնկեան Մատենադարան

811·21

1660

## 16

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ։ Ամստերդամ, հրտ. Մատթէոս Ծարեցի եւ Աւետիս Ղլիճենց, տպ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի, 1660. 614 էջ։

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

Ինկած է։ Կը սկսի «Յորժէ ի բաց կալ հրաման...»։

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

Յիշեցէք զիս մեղաւոր նօթար մաթէոս յետ նորայ որ ձեռն աւելց է նա որ էրեւանեցի գ-լէճեցն աւետիս որ յիշեալ լիցիք ահեղին ատենին քրիստոսի ամէն.

Էջ 458

. . . . . . . . . . . . . . . . . . . . .

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ

Ամենայնում պայծառ ընթերցողաց

Շնորհօք եւ ամենազօրին աստուծոյ եւ նախախնամութեամբ տեառն մերոյ եւ փրկչին յիսուսի քրիստոսի ի թուին հայոց ռճԹ ի մայիսի ամսեան.

Ես նուաստ ծառայ Քրիստոսի Մատթէոս դպիր Ծարեցի նուաստ եւ ստորատուոր տեառն Փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց կամակցութեամբ սուրբ Հոգւոյն եւ հրամանաւն տեառն Հայոց Յակոբ կաթողիկոսի յիշեցելոյ եկեալ գնեցի յարեւմտեան յերկիրն Իտալացւոց վասն գործոյ տպագրութեան զոր եւ ուսայ ի հասանել ի պայծառ եւ ի գեղապարդ քաղաքն եւ նաւահանգիստն ի Վենետիկ Ուր ընթացեալ ի ապարանս գրոց բազում ջանիւք հոգ տարեալ. Վերահասու եղէ գործառնութեանն. Այլ զի Վենետիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ. Եւ էր մահ ասացի ի մեծն Հռոմ եւ հանդարտեցից փախել յամեցայ առանց գործոյ ի Վենետիկ ամիսս չորեքտասան եւ յորժամ վերջաւ մահն եւ բացեալ եղեն ճանապարհք եկեալ գնեցի ի մեծն Հռոմ անդ եւս եղէ վերահասու որ ոչ կային վարպետս կատարեալք այսմ գործոյ եւ ժամանակ ամանք եւ հակառակութեանք եւ բարեկամեալք կոյսերցին զմեծամեծս. Եւ զմտադիր ես ի խորհել զայս գործ որ եւ եղեւ խակ հրաման եւ ի ժողովոյն այսպէս որք ընդ արկու մերովքս արհեստաւորք այսմ գործոյ մի ոք իշխեսցէ հանել զայս արհեստ եւ տալ ի ձեռս Հայոց եւ որք անարգելոյ արտաքին զայս գործ ծանուցեալ եւ կամ յայտնի պատիժ առաքել կրեցոյն ի մէջ եւս կամէին ահագուցանել. Բայց ոչինչ էր փոյթ մեզ սոյին հրամանաւք Մնացի ի Հռոմ ամիսս ը. առանց գործոյ եւ քանիցս անգամ ազդ արարի կարդինալաց ժողովին եւ փափին ինքն. Բայց ոչ եղեւ հնար: Վասն որոյ յուսահատեալ զսուրբ հայրն որ աստն է ի սուրբ բարեաց. Եկեալ գնեցի ի յերկիրն յոլանդայ ի գեղեցկաշէն վայելուչ քաղաքն Ամսթերդամ եւ անդ եւս վերահասու եղեալ զոր պատուական վարպետք այս արհեստի եւ առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն որ զեանգեալ բազում ջանիւք եւ հոգացողութեամբ զսոյն գործեալ ուարակեցաք մեան ինչ առաջնորդել գործառնութեան մերոյ ի ցայգ եւ ի ցերեկ մաշեալ չափ աշխատելով մեզն եւ առանց ուրեք օգնականի յերկարելով յաջողութիւնս գ ամ եւ ը ամիս զանձն տանելով զվիշտս եւ զտառապանս զոր յայսպան ժամանակս կրեցաք ի հակառակութեանցն եւ յոչ կամեցողաց զբարեգոյն գործս ի ձեռաց այլազգաց եւ մանաւանդ մերայոցն չարաց ի սատանայէ կուրացելոց եւ յուշարարհականաց թէ ի եւ Վենետիկ եւ թէ աստ ի Ամսթերդամ որք խարդախանակ ամբաստանակաթեամբ զոր պարտն էին զմտարանել հակառակէին մշտապէս. Բանիւք գործովք եւ արգելմամբք եւ զառաջարկելոյ գործ մեր խափանել ջանային եւ թէ ամենք բարեպաշտք կամէին տալոց օգնութիւն մեզ տանել զայն եւս յուսահատեցուցանեն եւ ապաշաւել այնքան բարեգործութեան. Սակայն սատանայն ամենահնարեանց ոչ հնձեցաւ ի չար խորհուրդս նոցա եւ ոչ արար բան կամաց նոցա այլ օգնեաց ինձ աջողմամբ մեզ եւ ամենուրեք առաւել զշնորհն առաջի ամենեցուն եւ մեք եւս ոչ զանգիտեցաք ոչ թուլացաք ի գործառնութեանցս. Եւ ոչինչ էր փոյթ մեզ հակառակութիւնք եւ չարութիւնք նոցին վասն յուսոյն իմոյ որ առ Աստուած ապաւինեալ ի զօրութիւնս տեառն ի կատարումն գործոյս հասանել փութայի յիշելով զբանն առ Քրիստոնեայսն Պօղոսի զոր ասէ եթէ Աստուած՝ ի մեր կոյս իցէ ով իցէ մեզ հակառակ որպէս եւ եղեւ իսկ. Եւ շնորհօք ամենազօրին աստուծոյ աւարտեալ կատարեցաք զայդ գիր բոլոր յոյժ կատարեալ քանակութեամբ եւ որակութեամբ զանազանեալ յորոց մինն եւ իբրեւ միջին կերպ է այս զոր տեսանէք աստուածային Զոր յաղագս տեսութեան եւ փորձառութեան զեղեցաք գրեալ աղգի. Ծանիր որ ի ծնընդենէն Քրիստոսի ռոկզ. ի Հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ, սրբազան կաթողիկոսի կաթողիկոսին եւ ի թագաւորութեան պարսից փոքր շահ աբասին Եւ ի իշխանութեան քաղաքիս նորին [illegible] վիլհէլմ որանժայ եւ ի թուին որ ըստ Հայոց ռճժե ի դեկտեմբերի ամսոյ ի վայելուչ նաւահանգիստ եւ առատաշէն քաղաքն Ամսթերդամ ի յիշատակ մշտնջենաւոր եւ ի փառս Քրիստոսի Արդ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում շնորհս զանանէ գոհացարուք եւ եթէ ոչ ներեցէք իմում տկարութեանս եւ երկայնամիտ լերուք ընդ գործառնութիւնս զի իբրեւ զփորձ առեալք անհնարին եւ յոյժ ջանադրմամբ առանց զգալոյ նեղութեանց եւ անմխիթարութեանց եւ պանդխտութեան զոր կրէի մէջ Հոլանդայ խնդրեմ ներել պակասութեան գրոց զի օրինակն մի էր եւ չարագործք Ֆռանկք որ ոչ են տեղեակ գրոց մերոց եւ լեզուաց եւ ես միայն տկար գոլով կու որոգրէի հազիւ այսքան կարի առնել. Վասն որոյ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա աստուծով եւ վայելելով յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զիս զնուաստ ծառայ Մատթէոս դպիրս Ծարեցի եւ զծնողսն իմ զհայրն իմ հանգուցեալ զՊաւղոն եւ զմայրն իմ զԳեղեցիկխանն եւ հարազատ եղբայրս իմ զԳայլիխանն զՎարդանն զպայրաստանն ըղմանկանսն եւ զհոգեւորսն եւ զամենայն արեան մերձաւորս իմ կենդանիս եւ զննջեցեալս զայս յիշատակարանս Մատթէոսի գրեալ որ ձեռամբն յառաջ քան զննջելն ի ապագրելն չիասեալ ասացին որ էր գիրքն լր–րն տեսար յորժամ ապեցեալ իգ տետրն ի ցամաքէ եւ ի ծովէ մեղաց եւ նոյն նաթար Մատթէոսի թիվն Հայոց ռճժ յանվար ամսին իր յուս ի գ շաբաթ գիշերն ժա ժամին մեռաւ.

Եւ Երեւանեցի գըլէջեցն ոսկան վարդապետ եղբայր ուսկանսա որ յինէէր ի նորոյ գրամով եւ այլ աղօթութեամբ Աստուած իցն որ վառանակ ստ մեր մէջն վատակին հիւրայ

digitised by A.R.A.R.@

լինի որ ժամ որ մեռաւ եւ իբրեւ որբ մնացի ամէնէրգամ վասն այն որ որբացայ ոչ գայր բայց միայն ես ի կարդացող որ չի խիստ հէմուտ ժամանակ մի աւրէկուանայ եւ պարապ մընացի ես եւ ատեմանք եւ գործն եւ մըշակն ի ամիս ժամանակ անցաւ սկսան նուսերն գնալ ի դէմ արեւելս ի քաղաքն զմիւռնայ աթոռն սուրբն պողիկարպոսի որ է յոթնանանիցն ան-ճարութեան սկսա մընացեալ ժղ տեարն տպագրեցի վախելով այսպէս որբայցրեցի որբնակն եղի մի կողմ տպարանն մի կողմ մին կու նայի որբնակն մի ի տպարանն յորժամ որ պալ լինէր կու մեկնի այսպէս որբայցրեցի մընացալ ժղ տեարն այս, ասայ ընդարբայցրելն որ գուրին էր թվին ռճժ մարտ ամսին ին սուրբ աստուածածինն միջնորդ առնելով եւ բարեխօս առնել եւ յուս աստուած գրնել սուրբն գրիգոր լուսաւորիչն բարեխօս առնել ամենայն սուրբքն տպագրեցի ձերին սուրբ եւ մաքուր աղաւթիւքն մայիս ին աւարտ եղեւ. Դարձեալ վասն այսորիկ աղաչեմ ընձեզ ով եղբարք որ իմ վրաստահութեան ներէք որ ոչ եմ ես սո-ժամի անուանն իմ գրել անգինջ յիշատակարան բայց աէրն իմ այսպէս գիրեցուց գիր այս գործոյս որ միջա առվարութեան աէրն իմ այսմն որ գործ բարի նա կու աւանդէ ի ձեռս մե-ղաւորաց որպէս յանձնու ես ի ձեռս իմ անարժանիս այս գործս փառք նմա որ արժանի ա-րար զիս այսմ բարւոյ.

Վասնորոյ աղաչանք ունիմ ի վերայ այս գործիս թէ գէրամով թէ այլ օգնութեան որչափ որ կարումն կէր օգնեցի յանձնել եմ եւ ուխտագիր եղեր որ մինչեւ ի մահու կարէս ի՞չն որ եկանէ ցայց եւ ցերեկ պիտի որ աշխատիմ վասն սուրբ էջմիածնուն եւ աւետնահաս սուրբն զօրավարաս սարգիսին եւ որդոյն նորա մարտիրոսին որ ես պանդուխտ եղայ որ տպագ-րութեան արհեստն որ մաթէոսն սուրբ էջմիածնուն վասիմ աւրար թէ որ ես չինա այնպէս կու մեռնէի չէգիտէի թէ ով պիտէր տիրէլ ի վերայ քարիսանին ո մաղչիլ չոր պարապ կէր քարիսանին գեռ եմ մաղչիլ ամուժ չէր ես յուսալով առ աստուած եւ ամենայն սուրբք յանձն առի որժամ մեռաւ այլ պարապ յանձնեցաւ վասն էն գիս եւ ընտանիքն իմ ի յիշատակարան գրեցի դարձեալ սորայ յեա աստուածաշնչի գիր պիտի դուս գալ տիրացուն մեռաւ գեռ ի կամ կ գիր չէր փոխել գեռ ընձի գիր էլ պիտի փորվէլ ես եմ վարձատրել ամին չեւ ի սուրբ խաչն դուս դուքայ թէ վարդեանն չի մեռնիլ Դարձեալ աղաչեմ ընձեզ ով եղբարք որ ով հան-դիպիք սմայ առտյով եւ փայլելով կամ կարդալով կամ օրինակելով յիշեցէք զիս արժանաւոր աղաւթս ձեր էրեւանեցի դըլէջեցն ոսկան վարդապետի եղբայր աւետիս ի կողէ ծընող ա-զամայ պարոնակիրցն իմ մարիամ տառն որ է փոխեալ առ հանգերգեալն.

Դարձեալ յիշեցէք ընդհանրուցեալ ծնողսն իմ թորոսն մայրն իմ գոհարագիրն ընդ-ւաղ եղբարն իմ ոսկան վարդապետեան միւս վաճառական երարն իմ յովանէսն ընդ ուրքն իմ յուսուսաինէքն կրսեր եղբարն իմ միրզայիհան եւ պայն իմ գարարէն եւ հանիկն իմ մէյիքխա-թուն եւ ամենայն արեան մերձաւորք իմ ընկենդանիս եւ ընդ մեռեալս սուրբ որդիս եւ սերտ հաւատով.

Աստուած ողորմի տացէ որ ահեղ ատենին ի քրիստոսէ ողորմութիւն գտանէք ի նմանէ սէգալիս թողութիւն անէք որ իմ կարըս այս էր ոչ կարեմ շարայդրել բան գրոյ.

Դարձեալ յիշեցէք հոգեւոր եղբայրն իմ նորարոյս վաճառականն գէրէվանցի.

Սահմատինէնց Պօղոսի որդի գրիգորի իմ յանձնառած պարոնքն գորոյ էր տալու վասն էն ի յիշատակարանն գրեցաք զորա անունն Հայր մեր ու յերկինս ես սուրբ եղիցի անուն քո եկեսցէ արքայութիւն քո եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր թող մեզ պարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պար-տապանաց եւ մի տար ընդմեզ ի փորձութիւն այլ փրկեա ի չարէն զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ քո են փառք յաւիտեան ամէն. Ի թագաւորութեան սամանցուն ապվեցաւ գիրքս սուլթան իպրահիմի որդի նորարոս որ էր ի-ամենայն սուլթան մահամատն սիրտ նորա քա-ղցրացուցի վերայ քրիստոնէից զօրութեան աստուծոյ եւ աղաւթիւք ամենայն որբոց ամէն.

էջ 600

Կիւլպէնկեան Մատենադարան

811·21

1660

## 17

ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ (ԳԱԼԱՆՈՍ)· ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ···, Հռոմ, տպ. Հաւատոյ Տարածման (Propaganda Fide), 1661, 40 չհ· + 772 = 812 էջ։

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ԸՆԴ ՄԵԾԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀՌՈՎՄԱՅ: Շարադրեալ ի յերկուս հատորս. ի պատմական և վիճաբանական ի կարգէ Թէատինեանց Կղեմէս վարդապետէ: CONCILIATIONIS ECCLESIAE ARMENAE CUM ROMANA. Ex ipsis Armenorum patrum. In duas partes, Historialem & Controuersialem diuisae. Pars altera. Avtore Clemente Galano Surrentino clerico regulari theologo et S. Sedis Apostolicae ad Armenos Missionario. Tomus Secundus Հատոր Բ. Մասն Երկրորդ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Միայն լատիներէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

... Արդ տեսանելով ես Կղեմէս, անարժան կրօնաւոր ի կարգէ Թէատինեանց, և առաքեալ առաքելական վարդապետաց, շնորհօք սրբոյ հոգւոյն, և բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին, և սրբոյն գրիգորի հայոց լուսաւորչին ի յաւարտ և կատարումն հասուցի զշարադրութիւն պատմական և վիճաբանական մատենիցս. որ կոչին միաբանութիւն հայոց եկեղեցւոյ ընդ մեծի եկեղեցւոյն հռոմայ: և այս եղև ի թվականութեան փրկչին մերոյ. ռ.ո.կ. ի ներքոյ հովուապետութեան մեծի քահանայապետին տեառն մերոյ ալէքսանդրու եւթներորդի: Զոր գործս ողջախոհ յանձն առեալ էաք ի վաղուց ի խնդրոյ բազում ուղղափառ հայոց վարդապետաց բարեկամաց մերոց. որք նոյն միաբանութեան...

էջ 770

Կիւլպէնկեան Մատենադարան

230-2 Կղեմ.

18

ՍԱՂՄՈՍ: Ամստերդամ, հրատ. Աւետիս Ղլիճենց և Կարապետ Անդրիանցի, 1661 (ու. 1662), 702 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻ ՈՐ ԵՒ ՍԱՂՄՈՍԱՐԱՆ ՅՈՐՋՈՐՋԻ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

... Ապաւինելով ի կատարողն բոլորից ի Հոգի՛ն Սուրբ. և կոչեցինք զնա առ ի յօգնութիւն տկարութեանս մերում. և ձեռնարկեցինք տպել զերգս սաղմոսաց Աստուածահօր սուրբ մարգարէին Դաւթի: Վասն որո՛յ աղաչեմ զորդւոցա՛ն Տեառն իմ. և զպատուական և զՔրիստոսասէր հա՛րսդ, և զեղբարսդ իմ. զի յորժամ ջերմեռա՛նդ սրտիւ և յո՛րդ արտասուօք երգիցէք զհոգենուագ պաղատանս զմարգարէութեանս դաւթի. յայնժամ յիշեսջիք առ կատարօղն խնդրուածոց Քրիստոս. Նախ զծարեցի Մաթէոս սարկաւագն. որ հանգուցեալ է առ Աստուած: որ էր նօտար Փիլիպպոսի ճգնազգեաց Կաթուղիկոսի փոխեցելոյն առ Քրիստոս Որ բազում ջանիւք. և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց. զազնիւ և զպատուական գիրս զայս: Հրամանաւ և կամօք Երիս երանեալ Կաթուղիկոսին Յակոբայ: Իսկ զկերպ և զօրինակ առաջին առեալ էր յերջանիկ Բարունապետէն Մատթէ. նաև զպղպափար սաղմոսարանիս: Յիշեսջիք ընդ նմին. զննիեր և զօծանդակ, վերադրեալ մաթէոսին. զերեւանցի զլինանց աւետին. զեղբայր Երջանիկ Բարունապետին Ոսկանի որ ի ժամ մահուան մաթէոսին, յորդորեաց զնա, անդարձ առնե՛լ և կատարել զայս նոր տպարանս յիշատակ Սուրբ էջմիածնին և Սուրբ սարգսի վանացն. Իսկ զինի որոց, ներեսջիք և ինձ անպիտան և անարժան կարապետի անդրիանցւոյ բանի սպասաւորի՛, և աշակերտի վերոգրեցելոյ Երջանիկ Բարունապետին Ոսկանի. Եւ Թողութիւն շնորհեցէք ինձ մեղաւորիս. զի անհմտութեամբ ձեռնամուխ եղէ սրբագրութեան ա՛յսմ Աստուածային մատենիս Եւ եթէ գթեցի ինչ ի սմայ. տգիտութեամբ և ո՛չ կամաւ թիւրելո՛վ կամ աղալելով. շնորհեսջիք ինձ զայն: Իսկ եթէ գացի ինչ բառ հաճոյից ձերոց, այն Տեառն շնորհք է, և ո՛չ յինէն:

digitised by A.R.A.R.@

Զակիցրն էառ տպաւորութեան. առաժմս գաւթի ի թուականութեան Կենարար Փրկչին Յիսուսի: ամն և միակի: Իսկ ի Հայոց թուին. ռճ և մետասաներորդի: յամսեանն առաջնոյ ութերորդի: և դեկտեմբերի. երեք տասանին: Ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ առաջնոյ Կաթողիկոսին Սուրբ Էջմիածնի: ի յերկրին Ոլանդայ. ի քաղաքին Ամստերդամայ Նոր տպարանում Սուրբ Էջմիածնի և սուրբ Սարգսի: հոգաբարձութեամբ և ծախիւք վերագրելոյ զլծնկց ուխտին Երեւանեցւոյ:

. . . . . . . . . . . . . . . . . . . .

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ

Աղաչեմ զձեզ սէրք իմ սուրբք և եղբարք իմ. յիշեսջիք ի սա ընթեռնուլ զանձն բարեխնամելի աշակերտ զանէր յովհաննէս որդի զանդրէասեանն կարապետ զազատաւորանն. զսրբազգեաց մաւանս. և զսէք յիշեսջիք յիշեալ ի երկնաւոր զալստեան նորա. ամէն:

էջ 168:

. . . . . . . . . . . . . . . . . . . .

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Գ

Զաշակերտ Ոսկան Բարսեղեանն. զանէր յովհաննէսի որդի կարապետ. զազատաւորանն. յիշեսջիք առ Քրիստոս:

էջ 444:

. . . . . . . . . . . . . . . . . . . .

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Դ

Փառք անհասանելի մարդասիրութեանդ քո՛ Տէր իմ Յիսուս Քրիստոս. որ ետուր զզօրութիւն ամենախնամ և բազմաձեռն անձին իմոյ. տպաւորել հոգիաշահ կտակարանիքս. և հասանել յաւարտ սորին: Վասն որոյ երկրպագեմ քեզ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ յաւիտեանս. ամէն:

Արդ՝ կատարեցաւ շնորհօք ամենազօրին քրիստոսական մատեանս մարգարէութեան գաւթի. Յամի որ ի ծննդենէն Քրիստոսի. ռ. և ո. և կ և զ: յամսեանն հռոմայեցւոց յուլիսի. ժ և հինգին: Եւ ի թուականութեան հայկական սերիս՝ ռ և ճ, և մետասանին՝ յամսոյն ահեկի. ժա: յիշխանութեան նահանգին յոլանդայ. վիլհէլմոս պրինցին. ի ծովափնեայ քաղաքին որ կոչի Ամստէրդամ: Նոր տպարանում սուրբ Էջմիածնի. և սրբազնեան վկային իւրոյ սրբոյն Սարգսի զօրավարին: Յեօթներորդում ամի հայրապետութեան երից երանելոյ հովուապետին յաւաւարչական հօտիս. Տեառն Յակոբայ երրորդի արքեպիսկոպոսի Կաթողիկոսին Ջուղայեցւոյ: յաստուածակառոյց և գմբեթաւոր՝ երկնաքաղաք և Քրիստոսաբնակ գահոյին. որ վերանուանի Սուրբ Էջմիածին: Այլեւ աղօթիւք ներգործեալ եղբարց կուսակրօնից և աշխարհական և քահանայական խմբից, աղաչեմ զձեզ զսա ի վայելումն մանկանց սիոնի զիմանալի բուրաստանս: Ի փառս Քրիստոսի. և ի զովեստ ամենասուրբ անուան նորա ամէն:

Եւ արդ՝ աղաչեմ զձեզ սիրելիք Աստուծոյ յիշել ի Քրիստոս, զբազմաջան երկամբք. և քրտամբք աշխատութեամբ հոգաբարձուն և զմատակարարն տպարանիս. զՏէր Ոսկանն Բարսեղեանցն զեղբայրն, զՄէնորդ որդի զերեւանեցի զլծնկց ուխտին: Որ եկեալ պատմաճառ յարգարելով զմաթէոս տերեւացն. ընծայել զայս աշխատեմբ և բղձալի տպագրարանս Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգսի: Քանզի մաթէոսն ի հիւանդութեան իւրում, կոչեալ զվերագրեալ ուխտին և խնդրէր ի նմանէ. չ և ժէ. մահուն փոխ. զի սայլէ պարտապանացն իւրոց. որք յոյժ վշտացուցեալ էին զնա: Եւ ապաւէր առէ քո. տպագրատանս. և ռ և ժ Յիսուս որդւոյ. և վաճառել և զշահն նորա տրասցուք ի բաժինս. ինձ և քեզ: Իսկ թէ մեռայց զու ի գործ արկեալ զտպարանն մինչև վճարեսցես զպարտսն իմ. և զքոյն եւս տացես հանգերձ շահիւքն. և ապա եղիցի ընդ քեզ: Եւ զայս ոչ էառ յանձն ուխտին առեալ. եթէ տացես զտպարանդ յիշատակ սուրբ Էջմիածնին և սուրբ Սարգսին. լինիմ քեզ ընկեր. և առամ զխաղ. և եւս աշխատիմ անձամբս ի տպարանիս որպէս և կենդանի իցեմ. և զարգիւնս զրամին իմոյ բաշխեմ վերագրեալ սրբոցն. և յետ մահուան իմոյ զրամանդակն: Որոյ հաւանեալ մաթէոսն. և յամառ արարև տպար կտակ՝ զի յետ մահուան իւրոյ՝ և վճարման

digitised by A.R.A.R.@

պարտուց երկոցունցն՝ տացի տպագրատանն վերադարձել մնացածանիցն: եւ ինքն չեւ եւս աւարտեալ գլխաւոր որդւոյն Հանդերձ ի քրիստոս: Զորոյ զԹերթն լցեալ աւետիւն. եւ սկսեալ բազմանօր եւ փափագմամբ տպել ս և չ գեղապաճոյճ եւ գովելի սաղմոսարան, առ ի ընթերցումն Աստուածածնաբրոյ. որանց եւ կանանց: Վասն որոյ յիշեսջիք զծնող սորին զԹէոդորոսըն. եւ զմայրն զզօհարագիզն. եւ զպապն զգլիճենց գաքարիայն. եւ զմամն զմէլիք խաթունն. եւ զփոքր եղբայրն զմիրզախանն. եւ զքոյրն ռուսինէն. եւ զհանգուցեալ եղբայրն զյովհաննէսն: այլեւ զկենակից սորին զմարիամ տատն. եւ զամենայն ազգատոհմսն եւ զերախտաւորս սորին. եւ աստցէք լիով սրտիւ. տէր Աստուած ողորմեաց նոցա. եւ ջնջեսցէ զգիր յանցանաց նոցա. եւ արժանի արա արքայութեան քում: Հասին յետոյ հայցեսջիք եւ վասն իմ վերջացելոյս եւ անարժանիս. որդւոյս տէր յովհաննիսի. կարապետի կրօնաւորի անգրիանացւոյ. եւ կարծեցեալ զոլ բանի սպասաւորի: եւ յիմար եւ անպիտան աշակերտի. վերադարձեալ տեառն ոսկւոյ ամէնիմաստ հաւատարապետի. եւ փիլիսոփայի. եւ զազմատականացն Թարգմանչի: Եւ ներեսջիք սխալանաց իմոց. զի անծանօթ էի տպական արուեստիս եւ եւս բարբառոյ տաճկացն հոլանդիացւոց որպէս եւ նոքա մերոյս գրի եւ լեզուի: Վասն այսորիկ յոյժ տաժանմամբ եւ մեծաւ աշխատութեամբ. հազիւ կարացի այսքան յայտ ածել: եւ զլումայս բաւ այրւոյն որկի ի զանձանակս տեառն. եւ ամենայն կերպիւ ջանացի բստ կարողութեան իմոյ հետեւիլ ճշմարտութեան: մեքենորդութեամբ եւ օժանդակութեամբ վերադարձել աւետաբին: քանզի ողնէր միշտ ինձ. խօսելով ընդ նոսա. եւ ի սրբագրել փորձոյն. եւ ի բաղդատել պատկերացն: զի զոմանս բստ վերնագրացն. եւ զոմանս միոյ տան. կամ շարագրութեան. եւ զայլսն բստ ֆռանկաց օրինակացն եդիք: Այլեւ յերկուց հանդիպացեալ օրինակաց սրբագրեցաւ. մինն յառաջնոյ տպագրելոյն. եւ միւսն ի կեսարացւոյ տէր խաչատրոյ բարանապետի տպեալ յամենայն: սակ որոյ՝ զբաւս ոմանս եդինք տարբերք ի լուսանցսն, ստորատակն եւ բացատական նշանօք: Նոյնպէս եւ զտառս հեբրայեցւոցն. հանդերձ անուամբն իւրեանց, ի լուսանցս ածեցացն: եւ որ ի նոյնց հաճոյ Թուեցի ձեզ. ընկալջիք: Իսկ եԹէ յայտնեսցի ուրեք Թիւրութիւն կամ սխալութիւն. ի տգիտութենէ պատահեալ. ուղղեսջիք ներելով. իբրեւ ըննուԹենակիցք. եւ փորձիւ գիտողք զակարութիւնս մեր. որք ունիք կարողութիւն կատարելապէս. եւ մի բարկանայք, զի եւ մեք մարդ գոլով զԹեցաք. եւ զի անփոփոխն զոլ միայն Աստուծոյ է գործ: Իսկ որք չիցեն ներկրԹեալ յարուեստս շարագրութեան եւ ոչ ճանաչիցեն զսեռս եւ զհոլովս մասանցն բանի. նոցա չէ պարտ ձեռնամուխ լինել այսորիկ. գրելով. կամ եղծելով, այլ կարդալ զոր ինչ ի կարգին գրեալ է: Դարձեալ յիշեսջիք ի տէր. զամասիացի խուստապաշխի որդի մինասն. մարըն իւրով մարիամաւ. որ եւ մեզ. ջ մասչիլ փոխ որով զ.ո և մ. Ցիսուս որդւոյն կազմեալ յղեցինք նաւով յիզմիւռնիայ: Այլեւ յիշեսջիք զհանճարեղ արուեստաւորն. զֆումտիք քրիստոֆլուն, որ է ազգաւ ալամանն. որ եւ բազմահնար ջանիւ կերպացոյց զպղղովատեաց եւ զպղընձի տիպ տառիցս. որով ձուլեալ կերպանայ կազմարեալ գիրն: Նաեւ զշարող գրոյս, եան Եահէկն Բիքլման, պատանին. որ Թարգմանի Յօհաննէս. Յօհաննիսի. որոյ բազում աշխատութեամբ ուսուցի զգիրս հայոց. ի պէտս գործոյս: Իսկ զկնի սորին եԹէ տէր կամիցի եւ օգնեսցէ մեզ աղօԹիւք եղբարցդ. տպագրեսցէ փոքրիկ ժամագիրք. վասն հասարակաց անձանց. մինչեւ ի հասանել առ մեզ աստուածաշնչին եւ հրամանաց վեհապետին հաւու: եւ յա՛յնժամ արասցուք զպատուիրեալն ի նմանէ. տասիկ ձանձրանալոյ:

էջ 744–754:

. . . . . . . . . . . . . . . . . . . .

### ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ե

Կրկին անգամ խնդրեմ ի սիրելեացդ իմոց, յիշել առ քրիստոս. զՅովայկցի խօջայ շահրիմանն. եւ զկողակիցն իւր շահզատէն. եւ զորդին իւր խօջայ սահրատն եւ զկողակիցն իւր սալվարն. եւ զորդիսն իւր զգաքարիայն. եւ զմարգարէն եւ զայլն որեան մերձաւորսն սորին. նայեւ զընկերն, իւր միրզենց յովհանն. եւ զհայրն իւր մնացականն եւ զմայրն իւր անայեն. զեղբայրն իւր մկրտումն հանդերձ ազգականովն իւրով զի յոյժ օգնական եղեւ մեզ. ի ննջութեան մերում. քանզի տարակուսեալ պաշարեաք վասն դրամի եւ բազումք ունէին կարողութիւն, բայց ոչ կարէին օգնել, Թէ զգիրսն աւարտէաք: իսկ սա ձեռնտու եղեւ եւ ետ մեզ. ռ և էճ մասչիլ որով. աւարտեցինք. զրռ և զէճ. սաղմոսարանն: վասն որոյ յերեսանկեալ աղաչեմ զձեզ զի լիով սրտիւ ասասջիք տէր Աստուած ողորմեաց ասիցէք վերադարձել աստուածատուրայ որանցն կենդանեացն եւ ննջեցելոցն. եւ միով հայր մեղայիւ յանձն արասջիք տեառն. ասելով. Հայր մեր որ յերկինս:

էջ 761–762:

digitised by A.R.A.R.@

ԾԱՆՕԹ.

1. Անուանաթերթը կը պակսի: Վերնագիրը առած ենք «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակէն (էջ 18): Վերջաւորութեան 762-րդ էջին ներքեւ կայ յաջորդ էջի մը սկզբնատառին առաջին վանկը՝ «Դար», որ ներտողել կու տայ թէ 763-րդ կամ աւելի էջեր հոդած ըլլալու են:

2. Առաջին յիշատակարանը թերի է. կը պակսի առաջին մէկ թերթը:

*Կիւլպէնկեան Մատենադարան*

223.2

1661

## 19

*ՇԱՐԱԿՆՈՑ: Ամստերդամ, հրատ. Կարապետ Անդրիանցի եւ Ոսկան Վարդապետ Երեւանցի, տպ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի, 1664. 779 էջ:*

*ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ*

*ՇԱՐԱԿՆՈՑ: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք. աստուածայնոց եւ երջանիկ սրբոց վարդապետաց. Հայոց Թարգմանչաց դիտողութեամբ եկեղեցւոյ վայելչացուցանողաց: Ի Թուին փրկչական ՌՈԿԴ: Եւ ի հայոց ՌՃԺԳ յոգոստոսի ամսոյ ԺԴ: ի տպարան սուրբ Էջմիածնի եւ սուրբ սարգսի որ յամստէլտամի: յերկրորդում աւուր վերափոխման տեառն տիրամօր կուսի:*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ օգնութեամբ նորին՝ յանկեցաւ աւարտեցաւ տաղս երաժշտական, որ եւ շարակնոց, ի տպագրանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի. եւ սրբոյն Սարգսի՝ զօրավարի եւ որդւոյ նորա Մարտիրոսի: Ես նուաստս յամենայն. եւ անուամբ միայն բանի սպասաւորս՝ եւ ոչ գործով. Ոսկան վարդապետ, հրամանաւ վեհափառ կաթուղիկոսին Հայոց Տեառն Յակոբայ. եկի ի լիվօռնայ ի նուաճանդիսան դրանդուկի. յաղագս տպարանին: Եւ գտեալ անդ զեղբայրն իմ զաւետիս զի գնայր յէջմիածնեայ. վասն որոյ զտպարանն առի ի ձեռաց նորա ձեռագրով իւրով: Եւ գրեցի առ սեպհական աշակերտն իմ կարապետ վարդապետ. որ էր յամստէրտամ որպէսզի բառ կարգութեան իւրոյ զգործարանն ի գործ շարժեսցէ մինչեւ հասանիցեմ իմ առ ինքն: Եւ նա շարժեալ ի գործ՝ եւ սկսեալ զպակասորդ խաղիցն առ[illegible] չինել. եւ մինչեւ յաւարտումն խաղիցն տպել ձեռք մի սկսեալ զպակասորդ խաղիցն առ չինել. եւ զկնի դշխարակմանն. զորս եւ հասուցեալ էր մինչեւ ի գալն իմ ի կարգ համառօտաբար. Իսկ ի հասանելն իմ առա ձեռնարկեալ եռու քանդակել զնոր գիրս սակս խաբարմանն: Իսկ ի հասանելն իմ առա [illegible] յաջողութեան աստուածաշնչին. որ մեծաւ ջանիւ հազիւ մինչեւ ի գ ամիսն աւարտեցաւ. զորս սակս փորձի շարադրեցաք ի կարգս մարտիրոսաց. Բայց զրոււ եղեւ այժմ մասնիւ. ներ թուում փրկչի. հազար վեցհարիւր եւ վաթսուն եւ հնգումն: յամսեանն նոյեմբերի. որոյ էին աւուրք մէկ: Իսկ ըստ թուում հայոց հազար հարիւր եւ հնգում ներ ամսում նաւասարդի. որոյ էին աւուրք քսան եւ ութ ի հոլանդայ նուաճանդիսա ամստէրդամ: Արդ որք հանդիպիք աստուածային երգարանիս այսմիկ՝ ընթեռնլով, կամ հարկանցի գրանելով. Աստուած աստուածային [illegible] զորմեցի միով յիշատակել մի խնայէք, զի կարի աշխատեցաք ի սրբագրութեան զորա. Թէ ի հոլովս անուանց՝ եւ ի նախադրութիւնս նոցա. Թէ ի ժամանակս բայից. եւ ի կերպաւորութիւնս նոցա, հետեւելով հնաւորին արհեստին: վասն որոյ եթէ ոք հմուտ է քերթողութեան. եւ վարժ գրչութեան արհեստիւ. գտցէ եւ ոչինչ պակասեալ ի գրելոց նորին: բայց եղեն բայքն զոր եթէ ոք քննեսցէ բառ խնդրեհմանց բայիցն, գտցէ զհաւաստին: Նաեւ սակս անհրեւութիւն այլակերպութեան խնդրեմ մի վրդովիլ. այլ խոհեմաբար քննել. եւ ըստ բանաւորութեան յին իւրոյ համեմատել եւ զկերպաւորութիւն բային ներ ներկայում սահմանականին խուզել գի մի անհեթեթ լիցի եւ վարկպարագի: Եւ թէ այլ ինչ սխալութիւն գտցի այն չէ ի կամաց մերոց այլ ի մոռացմանէ. եւ կամ այլ իմն կասկածանաց. վասն որոյ խնդրեմք ներել. զպակասն լնուլ եւ զաւելորդն յապաւել. որք հմուտ էք արհեստի եւ մակացութեան. եւ զմեզ*

digitised by A.R.A.R.@

պահել անմեղադրելի։ Իսկ որք ոչ էք ներ հմտացեալ արհեստիս գրչութեան և քերթողութեան. մի այլ ինչ բարուրէք յանդգնաբար. այլ ջանացարուք ուսանել զգրեալս. և անդէկանալ ներպարուրեալ զխոտութեանն. և փառս վերընծայել Քրիստոսի Աստուծոյ ընդ Հօր և սրբոյ Հոգւոյն. այժմ և անդրաւ յաւիտենիւ. ամէն։

Զենի որոյ շնորհօքն Յիսուսի և աղօթիւք ձերոք սկսանելոց եմք զԱստուածաշունչն։

Կիւլպէնկեան Մատենադարան

264·7

1664

## 20

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ։ Ամստերդամ, հրատ. Ոսկան Վարդապետ Երեւանցի, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1666 (աւարտ. 1668), 6 չհ. + 628 + 834 = 1468 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ Ներ պարունակող չարակարգութեամբ նախնեացն մերոց և հմտարտասիրաց Թարգմանչաց։ Իսկ զենի հրամանաւ վեհափառին Տեառն Յակոբայ Հայոց Կաթուղիկոսի զլխակարգեալ և տնատեալ բստ Դաղմատացւոցն. նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս տարնթեր կարգեալ ամենեցուն. նուաստ ուսեան բանի Տեառն սպասաւորի. Ոսկանի Երևանեցւոյ։ Յամստէրդամ։ Ներ Տպարանում սրբոյն Էջմիածնի. և սրբոյն Սարգսի զօրավարի, ի Թուում փրկչին. 1666. Իսկ Հայոց. ռճժե. ամսեանն մարտի մետասանի։

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ Ա

ԲԱՆԱՋԻՒՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՎԵՀԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ՏԷՐ ՅԱԿՈԲ. Ի ՆՈՒԱՍՏԷ ՈՒՍՄԱՆԷ ԲԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐԷ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ՝ ՅԱՂԱԳՍ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՌԻՑ ԱՍՏՈՒԱԾԱՑՆՈՑ։

Մեծափառական իշխողիդ՝ և վեհափառի հրամանաւ յանձն կալցուք զգործառնութիւնս. որ ոչ է մեզ ճահ և բռնան, այլ յաւէտ այնպիսի որք վսեմափառք և հզօրնկալք են. մանաւանդ կիրթք ուսմամբ, և ներհմտացեալք ամենեքումբք մասամբք։ Քանզի բաղդատութիւն՝ լեզուաց այլատարազից ընդ իրեարս համեմատել կարի դժուարին է և տաժանելի իրակութիւն. մանաւանդ տաղչութիւն Հոգւոյն սրբոյ՝ բստ բանի սրբոյ առաքելոյն Պօղոսի. որ առ կորնթացիս։ Եւ ես յաւէտ բստ ինձ առն. որ յերկոցունցն եմ թափուր, Բայց յուսացեալ ի Հոգին սուրբ յորդորմամբ նորին սրբոյ Առաքելոյ. և ի սրբանուէր աղօթս քո՝ արկանեմ զանձն իմ ի խորս այսպիսի ձեռնարկութեան. առ ի բաղդատել. և ընդ իրեարս համեմատել զբարբառս Հայոց ընդ Դաղմատացւոց ատիքնելով և զլխատելով. և բստ նոցին համարոյ չարակարգելով ամեն համարարութիւն. որ առ նոսա զոյ յօրինեալ՝ այսինքն հանուրց Աստուածաշունչ մատենին. հնոյ և նորոյ. որպէս առ մեզ միայն Աւետարանին սրբոյ տեսանեմք յարմարեալ. և ոչ ամենեցուն գրոց։ Իսկ Աւետարանին այսու ևս պակասի, զի նոյն զլուխն թէ Մատթէոսին. և եթէ այլոցն. ինքն առ ինքն ո՛չ ունի համաձայնութիւն. այլ առ այլս միայն. բայց Դաղմատացւոցն ուրանոր նախ զիրքն ինքն առ ինքն ունի զհամաձայնութիւն. եդեալ է այսու գրով. վեր և վայր՝ առ որս և զհամարաթիւսն եդեալ կրկնակիւք։ Նաև ցանգքն բստ այսմ են յարմարեալք։ Վասն որոյ և մեք ով Հայր պատուական բստ բարձրագունից հրամանաց քոց արարաք. զլխատելով և տնատելով. զհամարաթիւսն ևս տարնթեր նմին դնելով բազմաւ աշխատութեամբ. քանզի պատահեցաւ ուրեք առաւելութիւն ի մերս. և պակասութիւն ի նոսա. նոյնպէս անդրադարձութեամբ առաւելութիւն ի նոսա. և պակասութիւն ի մերս. առ այսպիսիս լռեցաք և ոչ իշխեցաք առաւելուլ՝ կամ պակասեցուցանել. թէպէտ ուրիշ զոյր միտս։ քանզի ուրանոր զթիւսն եմք ի բաց թողեալ՝ միով կամ երկոքումբք. և կամ այլ աւելեօք թուօք. անդանօր մերս է պակաս զտեալ։ Իսկ ուրանոր բազմօք տողիւք. կամ էջիւ, մանաւանդ մատենիւ իսկ. այն առ նոսա ո՛չ է զտեալ։ Նաև

digitised by A.R.A.R.@

մասանց. որք կարի յոլով են եղեալք տարածայնք, և կամ խառնեալք. և կամ սաստկեալք և նուազեալք. այնպիսեացն զգլխահամարսն միայն եդեալ և զմանր համարսն ի բաց եմ թողեալ որպէս բարուքայն՝ յեսուայն՝ որ է սիրաքայն և այլոց: Իսկ սորանոր մասանցն ամենևին ոչ է եդեալ առ նոսա՝ զմերն միայն գրելով թողեալ եմ:

Նաև զմերակսն համար ընդ նոցայն համարոյ չարակարգել անհնարին եղև. քանզի զաղմատացւոցն երբեմն համարիւք ամբափակեալ կայ՝ զորս խախտել ամենևին անհնարին է. մանաւանդ զի համաձայնութիւն հանրոյ Աստուածաշնչոյն նոցա համարութեամբն է և ոչ մերովս. զմերն և զնոցայն համայն կարգել անհնարին եղև, զի ի լուսանցն տեղի ո՛չ մնաց. իսկ զմերն միայն գրելով համաձայնութիւն ո՛չ լինէր. քանզի համաձայնութիւն նոցա համարովն է. և նոցա ցանկովն. որպէս և տեսանէ որրանձնութիւն ձեր: Այլ և զփոքր համարն ո՛չ կարացաք հայկականաց տառիւք չարագծել. քանզի ընդ համարագլխոցն եօթն գիրս ևս զան գրուշմեալք. զի եթէ զհամարսն գրովք մերովք եդեալ զգիրսն զանազանել ի բաց թողուաք անհնարին էր. քանզի սորանոր զհամաձայնութիւնսն արարեալ են, ընդ համարութեամբն և զատուած զանազանել են եղեալ՝ որպէս առէս յայտնի. վասն որոյ ո՛չ կարացաք բառնալ. զի մի ի համաձայնութիւնսն այլայլակս գրեսցին. և ներ ակըլա՞ծ իւրեանց այլայլէս: որովք խարբախումն լինի յաշուգին: ուստի որոյ զամենայն ըստ նոցայն չարակարգեցաք: Բայց սակս սերընդելութեան ձևոց համարագլխոցն. առս նախակարգեցաք մերով համարագրով. զմերսն հաւա՞ նոցին եդեալ: զի նոյժ վայրում սորա վարժեսցին, և ներ ակըլա՞ծ իւրեամ անտարակոյս ընթասցին: որոց ընթերցմամբ և անգիտութեամբ յուսաւորեսցին. և գիտաս զզօրութիւնս գրոց Աստուածայնոց ի մեր աւգեն շնորհօք և ի թիկունս հասութեամբ ամենաօրրոյ երրորդութեան: Վասն որոյ հայցեմ ժամըով ի քումմէ պատուականութենէ և յամենեցունց պատահողաց. եթէ սխալմին կամք ձեր Տեառն շնորհ և մենութիւն, զմեզ արժանի առնել ի յիշումն բարւոյ՝ և յաղօթս՝ ապա թէ ոչ. զմեզ անարժանս և անպատեհիս թողուլ վասն Քրիստոսի, որ է օրհնեալ ընդ Հօր և ընդ Հոգւոյն. այժմ և անդրատ յաւիտեանս. Ամէն:

**ԲԱՑԱՏՐԱԿԱՆ Բ**

Առ Ընթերցողս:

Շնորհիւ և օգնութեամբ ամենազօրն Աստուծոյ մասանս Աստուածաշունչ բազմաւ աշխատութեամբ կարգաւորեցաք՝ գլխագրութեամբ և տնատութեամբ ըստ զաղմատացւոցն. նաև ցանկով և համաձայնութեամբ: Քանզի համաձայնութիւն բովանդակից մասանց ըստ սորոյ աւետարանին, առ մեզ ո՛չ գտանին, այլ առ զաղմատացիսն միայն. թէպէտ առ մեզ ևս գտանին. ի զաղմատացւոց թարգմանեալ: որպիսի է Աստուածաշնչին զագարու վարդապետի վալաքացւոյ՝ և որք ի նմանէ զաղափարեալք են ներ քաղաքում չուղայ, այնք ևս ծայրատեալք՝ և ապարատեալք ի գրչաց: Բայց ես նուաստս յամենից՝ և յետնեալս անձամբ և գիտութեամբ ի մէջ մանկանց եկեղեցւոյ տէր ոսկանս բանի ստրատոր յերկրէն արարատայ ի գիւղաքաղաքէն երևանայ՝ հրամանաւ հաւուն հայոց՝ և կաթողիկոսին տեառն Յակոբայ՝ եկեալ յամստերդամ մեծաքրքի մասանցս աստուածայնոյ: Զգլխաւորսն ի նախնեաց՝ ես ևս անտակցի ըստ զաղմատացւոցն. զթիւսն. և զհամաձայնութիւնսն աստղբեցի մի ըստ միոջէ՝ որպէս էր հնար. քանզի ո՛չ ամենևին, և ամենայն իրօք միաբանեցան. այլ ի տեղիս յոլովս տարածայնեցան գլխով՝ և տամբ՝ ոմանք յետ և յառաջ՝ ոմանք թերիք և աւելորդք. որոց յարմարումն ընդ իրեարս կարի դժուարու եղև, և բազմաց ջանիւ: Որպէս է տեսանել ի գիրս մովսէսի, յեսուայ. թագաւորութեանցն. մանաւանդ ի գիրս եսթերայ. եզրասայ. տուբիթայ. սաղմոսի. դանիէլի. և այլոց:

Որք են այսպիսիք տարբերութիւնք: Նախորդն գրութիւն գլխոց՝ և տանցն: Երկրորդն զոյն և ոչ զոյն գրոց՝ գլխոց՝ և տանց: Թէ առ մեզ՝ և թէ առ նոսա: Երրորդն, զգլխոց և տանց սաստկութիւն և նուազութիւն: Չորրորդն, գլխոց և տանց յետ և յառաջ լինելն: Հինգերորդն. բանից այլատարազութիւնք, և շարժափոխութիւնք: Վեցերորդն վասն մերոյն ցանկոյ և նախադրութեան:

Նախորդն, որ է գրութիւն գլխոց և տանց. ո՛չ է յամենայն սուրբ ըստ կարգի չարակարգեալ՝ այլ խառնիխուռն. քանզի սորանոր էին համեմատք չարակարգեալք իրեարց, մեք ևս ըստ այնմ չարի զթիւսն յարադրեցաք. իսկ սորանոր ո՛չ էին համաձայնք և յարմարք. գնոյն ևս խառնիխուռն կարգեցաք: Ըստ գլխոյ զանուրեք գտանին, միայն ի գիրս եզրասայ. եսթերայ. նաև ի գիրս առակացն սաղմոսի. և դանիէլի: բայց ըստ տանց համեմատ գիրս գտանին. զանուրեք համարսն ընթանան: Թէպէտ ի մասանս նորոց կտակարանաց տակաւ գտանին այլատարազք. որպէս քաջամիտ ընթերցողաց բացայայտ երևի: Արդ այսոցիկ այսպէս գոյով. ո՛չ զմերոյն շարադրութիւն բառնալ կարացաք խախտել. և ոչ զնո–

digitised by A.R.A.R.@

ցայն գլխոյ Թիւ եւ տանց. քանզի Թէ զԹիւ գլխոցն խախտեսցէ՝ կամ տանց. ընդ նոսին հարկ լինի եւ զԹիւ համաձայնուԹեանցն փոխել՝ եւ զԹիւս ցանկոյն. որ էր անտանելի գործ. վասն որոյ այսքանս հնարեցաք հազիւ: զմերայինն շարադրուԹիւն անխախտ պահել. եւ զգլխատուԹիւնս եւ զտնատուԹիւնս ըստ Թուոյ նոցա յօրինել, որպէս ահա տեսանես ի գիրս եսԹերայ. եզրասայ. սաղմոսի. դանիէլի եւ այլոց:

Երկրորդն է գոլ գրոցն եւ ոչ գոլ՝ առ մեզ եւ առ նոսա: քանզի առ նոսա գոն գիրք յեսուայ որդւոյ սիրաքայ կատարելապէս ընկալեալ ըստ այլոց Աստուածաշնչոց գրոց՝ անահամարով գլխով եւ համաձայնուԹեամբ փակեալ. զոր եւ ես ըստ իմոյ կարի Թարգմանեալ յօրինեցի ըստ լատինացւոցն. քանզի մեզ ո՛չ գոյր լիապէս. այլ ծաղկաքաղ արարեալ: Նաեւ ստեփաննոս վարդապետն պօղոնացի Թարգմանեալ եւ տպեալ ըստ մերոյ խնդրոյ. բայց ո՛չ ժամանեաց մեզ յօգնուԹիւն, այլ զինի ամի միոյ. Նաեւ չորրորդ գիրս Եզրասայ՝ որ մեզ ո՛չ գոյր ներ մատենից Աստուածայնոց. այլ միայն ի գրչագիրս սաղմոսարանից՝ զայն եւս ծաղկաքաղ արարեալ. նոյնպէս եւ զայն գիր ի հայս բարբառ Թարգմանեալ շարադրեցի. Նաեւ ըզցանկս Աստուածաշնչին: Բայց այս չորրորդս Եզրասա առ նոսա եւս երկրորդ գոլով ոչ ունի զհամաձայնուԹիւնս, եւ ո՛չ ի տեղւոջ իւրում, այլ ի վերջոյ եդեալ ընդ եզրասայ երրորդի: իսկ եզրասն՝ որ է առ լատինացիս երրորդ՝ առ մեզ առաջին էր կարգեալ՝ ես եւս ըստ մերոյն առաջին կարգեցի, փոփոխելով զԹիւ համաձայնուԹեանցն ներ ցանկոյն, եւ ի լուսանցացն: բայց կարի աշխատանք եղեւ: Սակայն երրորդ գիր մակաբայեցւոցն սակս առ նոսա ոչ գոլոյն ես եւս ըստ մերոյն որպէս էր եդեալ Թողի գլխոյ եւ համարոյ՝ եդի:

Երրորդն է գլխոց եւ տանց առաւելուԹիւն եւ նուազուԹիւն. զորօր եւս ի գիրս եսԹերայ. տօբիԹայ. դանիէլի եւ այլոց բազմաց գտցես. որք ի ձեռն համարաԹուոցն բացայայտնին: քանզի որք ի մեզ պակասք գոն, զԹիւն նոցին եւս եմք Թողեալ՝ ուրանօր տեսանես զերկու կամ զչորս համարն գրեալ՝ եւ զայլսն ըստ կարգի. եւ ի մէջ այնոցիկ համարոցն, Թուով միով կամ երկուքումբք. կամ եւս յոլովիւք ի բաց Թողեալ՝ որքան Թիւ ոչ գտցի այնքանով Թուով զմերն պակաս լեալ իմա: Նոյնպէս եւ զաւելեալն ի մեզ՝ յորժամ տեսանիցես բազմաւ տողով ո՛չ անտառեալ. գիտասցես Թէ այնքան բանն աւելորդ է առ մեզ. մանաւանդ զի ընդդնաձեւ նշանն լատինացւոց եդաք ի մէջ, որքանք պարունակին ներ այնց ընդդնաձեւուցն, որպէս գտանես ի գիրս Թագաւորաց. եսԹերայ. առակացն. եւ այլոց: Բայց գոն եւս յայնց նշանացն, որք ըստ լատինացւոցն են եդեալք:

Չորրորդ՝ գլխոց եւ տանց յառաջ եւ յետ գոլն: Քանզի գոն գլուխք ի գիրս եսԹերայ՝ եւ սաղմոսի, եւ այլոց. որոց կէսն առա, եւ կէսն յայլում վայրոջ է գրեալ. Նաեւ տասնեմեկն. յառաջ է գրեալ եւ միԹն յետոյ: երեսուն յառաջ է գրեալ եւ քսանեւհինգն յետոյ. տասնեւերեք յառաջ է եւ մինն յետոյ. այնպէս եւ տանցն գոն յետեւյառաջուԹիւնք: զորս զամենեսեան ներ տեղւոջ իւրեանց գտանել մարԹանայք:

Բայց երրորդ մակաբայեցին. որ ո՛չ գոյ լատինացւոց. ոչ տեսանեցաք. քանզի զցանկն եդեալ են. եւ ի մէջ բնաբանին գլխահամար ո՛չ են կարգեալ. զի ընդ ցանկոյն համեմատեալ տեսանելէաք, Թէ լաւ, եւ Թէ վատ. վասն այնորիկ՝ այնպէս անգլուխ և անհամար Թողեցաք: Այսպէս եւ այլքն, գլխահամարք բնաբանին ընդ համարոյ ցանկոյն ոչ համաձայնին ամենայնիւ եւ ամենայն ուրեք, այլ զոնուրեք. որովք համարօք եւ ցանկօք անկարելի էր զհամաձայնուԹիւն յօրինել: վասն որոյ զայսքանս հնարեցաք՝ զի որքանք գլուխք տարանջատեալք էին ի միմեանց՝ եւ կամ յետեւյառաջ էին ընդ լատինացւոցն. այնց ի կիցն տեղւոջ զգլուխ կարգեցաք, եւ զտանաԹիւն ըստ կարգի եդաք. զի ի ձեռն գլխաԹուոցն. եւ տանց Թուոցն մարԹասջիք, եւ զհամաձայնուԹիւնսն, եւ զԹիւս ցանկոյն ի տեղիս իւրեանց հաւաստեաւ գտանել: Այսոինքն կիցն երեսունեւմէկ. եւ կիցն մետասան. բայց զմանրաԹիւան ըստ կարգին գտանես յերկոսին տեղին:

Հինգերորդ՝ անուանց եւ բանից շաղփաղփուԹիւն եւ շաղակրատուԹիւն, զի զմի եւ զնոյն անուն ի բազում տեղիս բազմադիմիք են եդեալք: Զայս ոչ առեմ, որոց այլեւայլ անուանակոչուԹիւն է հանդիպեալ. որպէս զէզէօնի, եւ սեդեկիայի, եւ այլոց յոքունց. այլ զայնս, որք միեւնոյնք են ի բազում տեղիս բազմադիմիք են գրեալք: Նոյնպէս եւ շարադրուԹիւնք յոլովք գոն աղճատեալք. որք ամենեւին զտեսուԹիւն իւր ոչ յայտնեն. այսպիսեաց ըստ կարի հոգ տարեալ ուղղեցաք. ո՛չ բնաւին, զի մի ի պարսաւագիտաց եպերեցիմք, այլ զոմանս: Նաեւ զոր ոչ իշխեցաք փոփոխել՝ կամ բառնալ ի լուսանցսն նոտրու գրով եդաք. զի ճշմարտասէրքն՝ եւ վերահասուքն տեղեկասցին, եւ մտադիւրք լիցին: Իսկ որք ոչ կարի տարանջատք երեւեցան, եւ կամ տարանջատեցեալ այլով կերպիւ զայլ իմն զբան նշանակեցին. զայնս ոչ խախտեցաք՝ եւ ոչ ի լուսանցսն զծագրեցաք:

digitised by A.R.A.R.@

Վեցերորդ վասն ցանգոցն եւ նախադրութեանցն նախնեաց. զորս չարակարգել անհանչ թուեցան. մի զի համար սորին ոչ է այնու ցանգով. եւ ոչ անսասութիւնքն. եւ ոչ համաձայնութիւնքն: Երկրորդ՝ զի սուփն կարի սասուար գոյր՝ եւ ծախն յոյով. որոյ աշխատանքն եւ ծախն գիտաւորութեան ոչ արժէին. քանզի գիտաւորութիւն զնելոյն, ո՛չ այլ ինչ էր՝ եթէ ո՛չ այս միայն. զի նախնեացն վասակ մի բարձցի. իսկ օգտութիւն եւ ոչ ծղի միոյ գոյր: Մանաւանդ զի ներ բնաբանիցն այնչափ տեղի չեղեւ զի ընդ զազմասացւոց համարոյն զմերն եւս էաք եղեալ. Թարգ բնաբանի համարոյն զցանգան զնել անհեթեթ էր: Երրորդ զի եւ համար ցանգոյն ընդ համարոյ գլխոյ բնաբանին էր անպատեհ եղեալ սղալելով զրչաց: Չորրորդ՝ զի համար գլխոցն ի բնաբանն՝ է ուրեք զի եղեալ է՝ եւ է ուրեք զի ոչ է եղեալ. Նաեւ եղեալքն ի տեղիս յոլովս անհամաձայնք են եղեալք ընդ ցանգոյն: Սակս այսքանեաց պատճառաց ո՛չ էլան նախադրութիւնքն եւ ցանգքն ասաջինք: Իսկ զհարցեալսն եւ զեղեալսն ի փառս Քրիստոսի ընկալարուք. եւ զմեզ ի մեղադրանաց անպարտ արարէք:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գոհութիւն, պատիւ, եւ փառք էութեան բնիկագոյի՝ ամենայն կարողի: Երրորդական անձնաւորութեան, եւ միակն Աստուածութեան Հօր եւ Որդւոյ, եւ Հոգւոյն սրբոյ՝ ծնողի եւ ծնիցելոյ. եւ բղխողի ի նոյնոյ էութենէ: Համապետաց՝ համագոյից՝ եւ համազօրաց. ի հանուրց արարածոց, եւ բնաւից ստեղծուածոց, իմանալեաց եւ զգալեաց. նիւթականաց տարրեղինաց, եւ յաննիւթից հրաշունից սեռից. անցելով ամանակաւ, եւ ներկայիւ կենցաղիւ. եւ ապառնեաւ յաւիտենիւ: զի նա զհարողութիւն անարժանութեան իմում ձեռնտուութեամբ և օժանդակութեամբ ընկերակցութեան մարմնականաց զոյգիւք պայազատացաց. Սեբաստիանոսի Թէոդորոսի, եւ Պետրոսի չուզայեցւոց: Քանզի Աստուածակերպ և կրաւնէս այսորիկ հայելով ի նուազութիւն Աստուածայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս Հայոց. մանաւանդ վարդապետաց՝ եւ վանականաց՝ եւ զրոց աշակերտաց: վասն որոյ ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմեանս, քաջալերելով եւ զիմս նուաստութիւն. որ սակս զոյից փարանէի. ձեռնտու եղեն ինձ ներ գործառնութեանս այսմիկ. տալով առատապէս զծախս զրամոյն բստ որում եւ յորժամ պիտոյանայր:

Քանզի ես իշխանութեամբ եւ հրամանաւ վեհափառի Կաթուղիկոսի եւ պատրիարգի հայկազանս սեռի. ներ պատրիարգարանում սրբոյ էջմիածնի՝ լուսանկարի՝ եւ Քրիստոսահաճելեցելոյ, տեառն Ցակոբու: ներ Թուոջ փրկչին վեց հազարերորդի վեց հարիւրորդի վաթսներորդի երկրորդի: իսկ բստ հայոց թուոյ հազարերորդի. հարիւրորդի մետասաներորդի. սեպտեմբերի. իէ. եկեալ յերկրէ եւ յազգէ իմմէ զիմեցի ի կողմանս Եւրոպիոյ. յառաջս սորին մասնիս այսորիկ աստուածայնոյ. եւ բազմաւ վշտիւ եւ տառապակրութեամբ եկեալ հասի ի սահմանս յիտալիոյ՝ յերկիրն Թուսզանու. ի քաղաքն Լիվոռնայ. ներ նախնեալ նուազում զաչոք զտի ինձ զօժանդակ. սակս որոյ թողեալ գնացի ի Հռոմայ. գտեալ անդ զազի յաջողութիւն գործառնութեանս. եւ անդ եւս ոչ եղեւ ինչ մխիթարութիւն օգնականութեան գործոյս. վասն յոքունց պատճառաց ներհակականաց. թէ ի մերայնոց ազանց. եւ թէ ինքեանց կանոնաց եւ սահմանաց՝ զորս մի բստ միոջէ չարագրել ձանձրութիւն է:

Իսկ ի դառնալն իմում անդրէն յԼիվոռնայ յետ բազմաց հակառակութեանց սատակայարից եւ փաքուսաց մերոյոց ազանց որք ոչ զօղուտ ազգի եւ զպրոյ աթոռոյն այլ զանձանց զցանկութիւն. եւ կամաց զհաճութիւն կամէին լնուլ, որոց ընդդիմակայեալ. զոչինչ եսու հաւանութեան բանս: այլ ընդերից հաւատարմագունից վերոգրեցելոց արանց եւ Քրիստոսասիրաց՝ յետ բազմաց քննութեանց եւ հարցափորձութեանց միաբանեցայ սիրով՝ եւ զաշխատդրականաւ զրով. զի սոքա երեքեանս ընդ իս հոգացեն զամենայն ծախս վերոգրեցելոյ մատենին մինչեւ ցաւարտ. առ յօգուտ ազգիս եւ ի շահ սրբոյ աթոռոյն:

Բայց այսպիսի եղեւ պայմանն, քանզի ի Թուին. ռճժզ. փետրվարի. ի. վերոգրեցեալ պարոն սեպաստիանոսն. եւ պարոն. պետրոսն խոստացան զաւելեալ շահն որ ի վաճառմանէ Աստուածաշնչոյն լինիցի տալ սուրբ էջմիածնի: նոյնպէս եւ պարոն Թէոդորոսն զիւր բաժնի շահոյ զկէսն խոստացաւ սուրբ երուսաղէմի. եւ զկէսն յուշոյ վանից սրբոյն սարգսի զօրավարին: Այսու պայմանաւ ես եւս չու արարեալ հասի ի կողմանս հիւսիսայնոյ յերկիրս բէլգիկոյ. որ այժմ կոչի հօլլանտիայ. ի քաղաքս յամսթէլտամի ի տպարան սրբոյ էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի: ուրանօր եւ սկիզբն արարի տալ զրովքն զորս ա-

digitised by A.R.A.R.@

ւեալն էր յօրինեալ. զի գիրք ժամանակին յայն խոշորք էին եւ անյարմարք. նաեւ զի ոչ գոյր գիր վասն համառօտութեան եւ խորագրութեան հարկեցայ առնել զնոր գիրս գոյիւ, զոր վասն փորձի եդեալ եմ ներ վերջնում չորակնոյն: նաեւ այսու բոլորգիր որ յաւելէն էր յօրինեալ: արդ զրոյք գանկերն արտաքոյ ներ թուոյն որպէս գրեալ է ի սկզբան, եւ յաւուրս սորին ժամանեցաք ողորմութեամբ նորին Տեառն եւ փրկչին Յիսուսի, ներ թուոյն Քրիստոսի հազարորդի վեց հարիւրորդի վաթսներորդի ութերորդի: յամսեանն հոկտեմբերի, որոյ էին աւուրք երեքտասներորդ: իսկ ըստ մերոյս հազարորդի հարիւրորդի հնգետասներորդի, ներ նոյնում ամսում հոկտեմբերի երրորդի. իսկ ըստ հայոց ամսոյ հրոտից քսաներորդի հինգերորդի:

Արդ աւարտ աւուրք եւ ծառայակիցք ի Քրիստոս, որք հանդիպիք այսմ նորատպեալ բուրաստանի. եւ Աստուածատնկեալ դրախտի՝ եւ յօրինուածի այսյիս. եւ յեղեմարգելի բառավառակեան գետոյս, որ առոգեալ արբուցանէ՝ եւ բղխոջեալ պայծառէ յոգիս բանականաց զպտղալից տնկսն առաքինութեանց՝ եւ վարուց բարեաց:

Յիշեսջիք միով հայր մերով զվերադրեալ խանենց պարոն Սանփանեան. եւ զհանգուցեալ ծնողսն նորին. զհայրն պարոն եղուէն, եւ զմայրն զխատունձէմն. եւ զայլ արեան մերձաւորս նորին:

Այլեւ զբնակչինաց պարոն Թէովորոսն. եւ զհայր նորին զմահտեսի յեղպարն. եւ զմայրն անանմէրին: եւ զայլ համազգիս նորին բոլորովին:

Նաեւ զպարոն Պետրոսն. եւ զհայր նորին զալէր ասաղն. եւ զմայր նորին զօղլանզայալն: եւ զայլ համաւեռ նորին զնոր եւ զհին:

Ընդ նոսին եւ զհայրն իմ զպարոն Թարոսն. եւ զմայրն իմ զզոհարալիքն. եւ զեղբայրն իմ զՅոհաննէսն զվախճանեցեալն առ Քրիստոս, որոյ բնչիւրն մակ եւ ի զործս յայս: այլեւ զմիւս եղբայրն իմ զաւետիսն որոյ զրամն ակաւ զիրքս. եւ ինքն եւս աշխատեցաւ ժամանակս ինչ ի խոնարհութեամբ եւ ի սուրբ առաքինութիւն գործոյս: եւ զայլ ազգայինս նոցին:

Ընդ որս եւ զհաւատարիմ աշակերտն իմ զկարապետ վարդապետ Անդրէասեանց. որ միշտ եւ անձանձիր՝ օգնեցաւ ի վերայ արարողութեան, եւ այլոց գործոց:

Այլեւ զձեռնասուն աշակերտն իմ զյոհան սարկաւագ երեւանեցի. որ զառաջիներորդ փորձն միշտ ընթերցաւ ընդ իս եւ ընդ վարդապետին՝ եւ աշխատեցաւ ի սփռելն գծութեան եւ ի ժողովելն: եւ ի կազմելն՝ եւ զանուանս տան հօրն եւ զամենայն զարմութիւն զործս հայոց եւ ծառայեաց մտերմաբար:

Եւ զայլս զամենեսեան զաշխատաւորս եւ զպարեմիս ջանադիրս յիշեսջիք, զի եւ զձեզ յիշեսցէ յիշիր յարքայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաւուր զերանաւէտ բարբառ նորա. որ է օրհնեալ ընդ Հօր. եւ ընդ սուրբ Հոգւոյն յաւիտեանս, ի յաւիտեանս յաւիտենից. ԱՄԷՆ: Հայր մեր որ յերկինս:

Կիւլպէնկեան Մատենադարան

220-4

1666

Կազմեց՝ Ա. Գ.

(Ծար. 2)

digitised by A.R.A.R.@